ԱՐԱՔՍՅԱ ՆԱԶԱՐԵԹՅԱՆ
ՀՊՏՀ վիճակագրության ամբիոնի ասպիրանտ

ՀՆԱ-Ի՝ ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԻ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ժամանակակից պայմաններում ակտիվացել են տնտեսական զարգացման հետազոտությունները: Համաշխարհային մակարդակով մշակվում են տնտեսական զարգացման գնահատման չափորոշիչներ և ցուցանիշներ: Այս հիմնախնդրի լուծմամբ են զբաղվում այնպիսի հեղինակավոր միջազգային կազմակերպություններ, ինչպիսիք են Համաշխարհային բանկը, ՄԱԿ-ը, Տնտեսական համագործակցության և զարգացման համաշխարհային կազմակերպությունը և այլն: Սույն հոդվածում քննարկվում են տնտեսական զարգացման մակարդակի գնահատման ագրեգացված ցուցանիշները: Առանձնակի խորությամբ վերլուծվել է ՀՆԱ-ն, բացահայտվել են վերջինիս հիմնական թերությունները և այդ համատեքստում ներկայացվել են այլընտրանքային ցուցանիշները:

Հիմնաբառեր: *տնտեսական զարգացում, տնտեսական աճ, ՀՆԱ, կայուն զարգացում, ագրեգացված ցուցանիշ*
JEL: F40, O10, O40

Տնտեսության կայուն զարգացումը ցանկացած տնտեսական համակարգի հիմնական նպատակն է: Սակայն դրա բնութագրիչների քանակական ու որակական կողմերի վիճակագրական ուսումնասիրության հիմնահարցերը շարունակում են մնալ արդիական՝ նոր խնդիրներ առաջադրելով գիտությանը: Տարբեր ժամանակներում տնտեսության զարգացման տեմպերի գնահատման համար առաջ են քաշվել տարբեր մոտեցումներ ու ցուցանիշներ: Դրանց շարքում առանցքային է ազգային հաշիվների համակարգի դերը:

Ազգային հաշիվների համակարգի ձևավորման ու զարգացման գործում մեծ դերակատարում են ունեցել 1929–33 թթ. մեծ տնտեսական ճգնաժամը և դրա հաղթահարման օբյեկտիվ անհրաժեշտությամբ ձևավորված տնտեսության պետական կարգավորման քեյնսյան տեսությունը: Սակայն պետք է նշել, որ դեռևս 1920–30-ական թթ. Կ. Կլարկն ու Ս. Կուզնեցն առաջարկեցին մշակել և ներդնել որոշակի համաթվեր, որոնք պետք է բնութագրեն տնտեսության զարգացման մակարդակն ու հնարավորություն տան իրականացնելու համեմատական վերլուծություններ: Այդ նպատակով Կ. Կլարկն առաջ քաշեց ՀԱԱ, իսկ Ս. Կուզնեցը՝ ՀՆԱ գաղափարը: 1934 թ. Ս. Կուզնեցը ԱՄՆ-ի կառավարության համար հատուկ մշակեց ՀՆԱ ցուցանիշը[1], որի նպատակն էր բոլոր տնտեսավարող սուբյեկտների կողմից ստեղծված արդյունքների միասնական գնահատումն ու ներկայացումը մեկ ընդհանրական ցուցանիշի միջոցով:

Ս. Կուզնեցը նշում էր, որ իր մշակած ցուցանիշը չի կարող կենսամակարդակի կամ տնտեսության զարգացման մակարդակի գնահատման ամփոփ ցուցանիշ համարվել, քանի որ վերջիններն ունեն առավել ընդգրկուն բովանդակություն: Հիմնական խնդիրը նա համարում էր այն, որ ՀՆԱ ցուցանիշը չի արտացոլում եկամուտների բաշխումը, ինչը բնակչության բարեկեցության մակարդակի վրա ազդող առանցքային գործոններից է[2]:

Իր հետագա հետազոտություններում Ս. Կուզնեցը բազմիցս անդրադարձել է ՀՆԱ ցուցանիշի թերություններին[3]: Մասնավորապես՝ այդ քննադատություններն ուղղված էին այն խնդրին, որ բարեկեցության կամ տնտեսական զարգացման մակարդակի գնահատման համար անհրաժեշտ է հստակ սահմանազատել տնտեսական աճի քանակական ու որակական կողմերն ու տարբերակել կարճաժամկետ ու երկարաժամկետ լագերը:

Այդուհանդերձ, 1944 թ. Բրետոնվուդսյան կոնֆերանսում կազմակերպված քննարկումների արդյունքում ՀՆԱ ցուցանիշը ստացավ տնտեսական աճի գնահատման միջազգային չափորոշչի կարգավիճակ[4]:

Ժամանակակից տնտեսագիտության մեջ ՀՆԱ և դրա հետ փոխկապակցված ցուցանիշների համակարգը սուր քննադատության է ենթարկվում: Առաջ է քաշվում այն տեսակետը, որ ՀՆԱ դինամիկան չի կարող ազգային տնտեսության վիճակի և բարեկեցության մակարդակի փոփոխության վերաբերյալ հստակ պատկերացում տալ: Որպես հիմնավորում առաջ են քաշվում ՀՆԱ-ի՝ որպես ամփոփ մակրոտնտեսական ցուցանիշի հետևյալ համակարգային թերությունները.[5]

1. ՀՆԱ-ն չի արտացոլում ազգային տնտեսության շրջանակներում արտադրված ապրանքների և ծառայությունների ողջ արժեքը: Մասնավորապես՝ տնային տնտեսության շրջանակներում արտադրված և սպառված արդյունքը չի ներառվում ՀՆԱ-ի մեջ: Որոշ հաշվարկներով այն կարող է հասնել

---

[1] Տե՛ս **Coyle D.,** GDP: A Brief but Affectionate History. UK: Princeton University Press. Chapter 1, 2012, էջ 12–13:

[2] Տե՛ս **Kuznets S.,** National Income, 1929–1932, 1934. 73rd US Congress, 2d session, Senate document no. 124, էջ 5–7:

[3] Տե՛ս **Dickinson E.,** GDP: a brief history // Foreign Policy. 2nd, January, 2011, էջ 1–4:

[4] Տե՛ս **Costanza R., Hart M.,** Beyond GDP: The Need for New Measure of Progress. USA: Boston University Creative Services, 2009, էջ 5–7:

[5] Տե՛ս **Лызлов Д.,** Преимущества и недостатки ВВП как показателя социально-экономического развития страны, "Российский внешнеэкономический вестник" 2009(2), էջ 32–40:

մինչև 75 տոկոսի[6]: Մյուս կողմից՝ կամավոր սկզբունքներով կատարված աշխատանքը կամ մատուցված ծառայությունները թեև չեն ներառվում ՀՆԱ պաշտոնական հաշվարկներում, սակայն նշանակալի չափով կարող են բարձրացնել ինչպես բարեկեցության մակարդակը, այնպես էլ նպաստել տնտեսության զարգացմանը: Այդուհանդերձ, այս խմբի հիմնական փաստարկները վերաբերում են դրական արտաքին էֆեկտների հաշվառմանը, որոնք որևէ կերպ չեն արտացոլվում ՀՆԱ-ի մեջ, սակայն անմիջականորեն ազդում են կենսամակարդակի և տնտեսական զարգացման տեմպերի վրա[7]:

2. Որոշ դեպքերում ՀՆԱ ցուցանիշը գերագնահատում է տնտեսության իրական վիճակը: Մասնավորապես՝ տնտեսական, սոցիալական և այլ հասարակական ենթակառուցվածքների վերականգնմանն ուղղված աշխատանքների ավելացման շնորհիվ ՀՆԱ ցուցանիշը, ըստ էության, աճում է, սակայն դա չի ուղեկցվում տնտեսական զարգացմամբ կամ կենսամակարդակի բարձրացմամբ: Այս իրավիճակը պատկերավոր կերպով նկարագրել է Ալֆրեդ Սովին՝ նշելով. «Այրեք Փարիզը, այնուհետև վերականգնեք, և ՀՆԱ-ն կաճի»[8]:

3. ՀՆԱ-ն չի կարող լինել ամփոփ ցուցանիշ տարբեր երկրների տնտեսական զարգացման վիճակի համեմատական վերլուծության համար: Խնդիրն այն է, որ ՀՆԱ ցուցանիշը պատկերացում չի տալիս, թե ինչ նպատակով են արտադրված ապրանքներն ու ծառայությունները: Եթե դրանք ունեն առավելապես բնական և այլ բնույթի աղետները վերացնելու ուղղվածություն, ինչով էլ պայմանավորվել է ՀՆԱ ցուցանիշի աճը, ապա չեն կարող հավաստի տեղեկություն տալ տնտեսական զարգացման և կենսամակարդակի վերաբերյալ: Միաժամանակ, արտադրված ապրանքների ու ծառայությունների ուղղվածության անորոշությունը կարող է թյուր եզրակացության պատճառ դառնալ: Այսպես՝ այն երկրներում, որտեղ մեծ է հանցագործությունների թիվը, հետևաբար՝ մեծ են նաև դատական համակարգի և բանտարկյալների կենսապայմանների ապահովման հետ կապված ծախսերը, այլ հավասար պայմաններում, կարծանագրվի ավելի մեծ ՀՆԱ: ՀՆԱ ցուցանիշի միջոցով տնտեսական զարգացման մակարդակի համեմատական վերլուծության նշանակալի բարդությունները կապված են նաև ազգային արժույթի փոխարժեքի տատանման հետ: Այսպես՝ տարբեր երկրների ՀՆԱ ցուցանիշների համեմատական վերլուծության ժամանակ որպես համադրելի արժույթ է ընդունվում ԱՄՆ դոլարը: Ազգային արժույթի փոխարժեքի կտրուկ տատանումը նշանակալի ազդեցություն է ունենում ԱՄՆ դոլարով արտահայտված ՀՆԱ ցուցանիշի վրա, սակայն տնտեսական զարգացման վիճակը բնութագրող իրական մակրոտնտեսական փոփոխականների էական փոփոխություն տեղի չի ունենում:

4. Է. Միշինը[9] և Հ. Դեյլին[10] նշում են, որ ՀՆԱ-ն պետք է դիտարկել որպես մի ցուցանիշ, որը կոչված է արտացոլելու տնտեսական համակարգում իրականացվող բոլոր գործարքների շուկայական արժեքը, որոնց ազդեցությունը կենսամակարդակի վրա այնքան էլ միանշանակ չէ: Որոշակի իրավիճակնե-

---

[6] Տե՛ս **Vaury O.,** Is GDP a good measure of economic progress? – URL: http://www.paecon.net/PAEReview/issue20/Vaury20.htm

[7] Տե՛ս նույն տեղը:

[8] Տե՛ս http://att-vesti.neva.ru/J37-5.HTM

[9] Տե՛ս **Mishan E.J.**, The Cost of' Economic Growth. Staples Press, London, 1967:

[10] Տե՛ս **Daly H.E.,** Steady-State Economics. W.H. Freeman, San Francisco, 1977:

րում ՀՆԱ աճը չի ուղեկցվում բարեկեցության մակարդակի բարձրացմամբ: Հ. Դեյլին հիմնավորում է նաև, որ ՀՆԱ աճը հանգեցնում է ավելի մեծ ծախսերի, քան բարեկեցության բարձրացման տեսանկյունից դրա ապահոված օգուտն է[11]: Միաժամանակ, ՀՆԱ աճն անպայմանորեն չի ենթադրում տնտեսական զարգացում կամ բարեկեցության աճ: Որոշ դեպքերում ՀՆԱ ցուցանիշի ավելի մեծ արժեքը կարող է պայմանավորված լինել չհաշվառվող տնտեսությունը հարկային դաշտ տեղափոխելու հանգամանքով, որ չի ուղեկցվում թողարկման իրական ծավալների աճով: Դա է պատճառը, որը ՀՆԱ-ն չի կարելի ընդունել որպես տնտեսական զարգացման մակարդակի գնահատման ամփոփ ցուցանիշ:

5. ՀՆԱ-ն որևէ կերպ չի արտացոլում պահանջմունքների բավարարման մակարդակը: Այսպես՝ խոշոր արդյունաբերական քաղաքներում համախառն թողարկման աճն ուղեկցվում է շրջակա միջավայրի աղտոտմամբ, սննդամթերքի էկոլոգիական վիճակի վատթարացմամբ: Սա նկատելիորեն կարող է բարձրացնել առավել բարձր կարգի պահանջմունքների բավարարվածության աստիճանը: Մյուս կողմից՝ տեղի է ունենում առաջնային պահանջմունքների (սննդամթերք, ջուր, մաքուր օդ) բավարարման որակի անկում: Ըստ էության, նշված պահանջմունքների բավարարումն առաջնահերթ է, և փոխարինման էֆեկտի դրույթները չեն տարածվում այդ պահանջմունքների բավարարմանն անհրաժեշտ ապրանքների և ծառայությունների վրա: Սակայն ՀՆԱ աճը, որն ուղեկցվում է բացասական արտաքին էֆեկտներով, նվազեցնում է առաջնային պահանջմունքների բավարարվածության աստիճանն ու որակը, ինչը բացասաբար է ազդում թե՛ տնտեսական զարգացման, թե՛ դրանից ուղղակիորեն ածանցվող կենսամակարդակի վրա:

6. ՀՆԱ-ն չի արտացոլում անհատական բարեկեցության մակարդակը: 1950-70-ական թվականներին զարգացած երկրներում անցկացված հետազոտությունները ցույց տվեցին, որ չնայած տնտեսական աճի կայուն տեմպերին, անհատական բարեկեցության մակարդակը մնում է անփոփոխ կամ նույնիսկ նվազում է: Ջ. Հելլիուլը փորձառական տվյալների հետազոտության հիման վրա հանգեց այն եզրակացության, որ եկամտի և անհատական բարեկեցության մակարդակի միջև ուղիղ կապը գործում է, քանի դեռ եկամուտը չի գերազանցել 15.000 ԱՄՆ դոլարը[12]:

Անկասկած, եկամտի այդ սահմանային չափի մեծությունը հաստատուն չէ: Դա է պատճառը, որ, շատ հետազոտողներ համամիտ են եկամտի սահմանային չափի գոյության պնդման հարցում, սակայն հակված են այն կարծիքին, որ դա հստակ որոշել հնարավոր չէ: Այսպես՝ Մ. Մակս-Նիֆը նշում է, որ յուրաքանչյուր հասարակության համար տնտեսական աճը մինչև որոշակի սահման հանգեցնում է կենսամակարդակի բարձրացման, սակայն այդ սահմանը գերազանցելուց հետո կարող է կենսապայմանների վատթարացման պատճառ դառնալ[13]: Անհատական բարեկեցության մակարդակի ուսումնասիրությամբ զբաղվող որոշ հետազոտողներ արտահայտում են այն տեսակետը, որ զարգացած երկրներում անհատական բարեկեցության մակար-

---

[11] Տե՛ս **Daly H.E.,** Allocation, distribution, and scale: towards an Economics that is efficient, just and sustainable. Ecological Economics 6: 1992, էջ 185–193:

[12] Տե՛ս **Helliwell J.,** How's life? Combining individual and national variations to explain subjective wellbeing. Economic Modelling 20: 2003, էջ 331–360:

[13] Տե՛ս **Max-Neef M.,** Economic growth and quality of life: A threshold hypothesis. Ecological Economics 15: 1995, էջ 115–118:

դակը կախված է ոչ այնքան եկամտի մակարդակի աճից, որքան ընտանեկան երջանկությունից, հասարակության վերաբերմունքից, առողջությունից և նմանատիպ ոչ նյութական բնույթի այլ գործոններից:

Ելնելով վերոնշյալից՝ մասնագիտական գրականության մեջ առաջարկվում են տնտեսական զարգացման մակարդակի գնահատման այլընտրանքային ցուցանիշներ: Մասնավորապես՝[14]

1. *Մարդկային զարգացման համաթիվ* (Human Development Index): Մինչև 2013 թվականը կոչվել է մարդկային ներուժի զարգացման համաթիվ: Բաղկացած է երեք հիմնական հենասյուներից.[15]

- կյանքի սպասվող տևողության համաթիվ,
- կրթության համաթիվ,
- մեկ շնչի հաշվով ՀԱԵ-ի համաթիվ:

2. *Կայուն տնտեսական բարեկեցության համաթիվ* (Index of Sustainable Economic Welfare): Մշակվել է Հ. Դեյլիի և Ջ. Կոբի կողմից 1980-ական թվականներին: Ըստ այս համաթվի՝ բացահայտվում է բարեկեցության մակարդակի դինամիկան տնտեսական փոփոխությունների համատեքստում: 1995 թվականին այն կատարելագործվեց և ստացավ *առաջընթացի գլխավոր ինդիկատոր* անվանումը՝ առավել ընդգրկուն բնութագրելով ոչ միայն բարեկեցության, այլև տնտեսական զարգացման մակարդակը: Ի տարբերություն ՀՆԱ ցուցանիշի, այն ավելի ընդգրկուն է և ներառում է կենսամակարդակը բնութագրող առավել իրատեսական փոփոխականներ:

3. *Իրական խնայողությունների համաթիվ* (Genuine Saveings): Ըստ էության, շեշտադրում է բարեկեցության ընթացիկ մակարդակի և երկարաժամկետ տնտեսական զարգացման փոխառնչությունը: Այս համաթվի հիմքում Ջ. Ռոուլսի արդարության տեսության տրամաբանությունն է[16]: Որպես կայուն տնտեսական զարգացման մակարդակի գնահատման ցուցանիշ՝ դա մշակվել է Դ. Պիրսի և Ջ. Ատկինսոնի կողմից 1993 թ., իսկ 2000 թ. հստակեցվել ու կատարելագործվել է համաշխարհային բանկի փորձագետների կողմից[17]: Այս ցուցանիշի հիմնական առավելությունը հաշվարկման հստակ մեթոդական հիմքն է, որը միասնական է և բացառում է տարբեր երկրների վիճակագրական ծառայությունների մեթոդաբանական տարբերություններով պայմանավորված թերությունները: Համաթիվն ամեն տարի հաշվարկվում և հրապարակվում է համաշխարհային բանկի կողմից, և ներկայում առանձնացվում է *ճշգրտված զուտ խնայողությունների համաթիվ* անվամբ:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարելի է փաստել, որ դիտարկվող ցուցանիշներն ունեն ինչպես ընդգծված առավելություններ, այնպես էլ թերություններ: Վերջին տասնամյակներում տնտեսական զարգացման հիմնական ուղղվածությունը խնդիրների համակարգային լուծումն է, որը ներառում է թե՛ սոցիալական, թե՛ տնտեսական, թե՛ բնապահպանական տեսանկյունները: Դրանց համակարգային լուծման անհրաժեշտությունը կարծես թե երկրորդ պլան է

---

[14] Տե՛ս **Van den Bergh J.,** The GDP paradox – Journal of Economic Psychology 30, 2009, էջ 117–135:

[15] Центр гуманитарных технологий. Индекс развития человеческого потенциала – Информация об исследовании. [Электронный ресурс] URL: http://gtmarket.ru/ratings/human-development-index/human-development-index-info

[16] Տե՛ս **Rawls J.,** A Theory of Justice. Clarendon Press, Oxford, 1972:

[17] Տե՛ս Эколого-экономический индекс регионов РФ. Методика и показатели расчета // С.Н. Бобылев, В.С. Минаков, С.В. Соловьева, В.В. Третьяков. М.: WWF России, РИА Новости, 2012, էջ 18–21:

մղել զուտ տնտեսական զարգացման և տնտեսության կայուն հավասարակշռության խնդիրները: Դասական տնտեսագիտական հարացույցները և սոցիալ-հոգեբանական, ինստիտուցիոնալ տեսությունները համադրվում են, և ժամանակակից տնտեսագիտական մեյնսթրիմը բազմադեմ է՝ ուղղված միասնական հասարակական խնդիրների լուծմանը: Ժամանակակից տնտեսագիտական վերլուծությունները, որոնք հիմնվում են վիճակագրական հետազոտության արդյունքների վրա, չեն կարող շրջանցել սոցիալական և բնապահպանական խնդիրները:

Սակայն, մյուս տեսանկյունից էլ, այդ խնդիրների սերտաճումը հնարավորություն չի տալիս առավել խորքային պատկերացում կազմելու դիտարկվող երևույթների ու գործընթացների զուտ տնտեսագիտական բովանդակության մասին: Տնտեսագիտության հետազոտության առարկան ավանդական ընկալումների շրջանակից դուրս է եկել և այժմ ընդգրկվում է հասարակական հարաբերությունների համակարգի ավելի լայն տիրույթում: Սա նշանակալի դժվարություններ է առաջացնում. մեծանում է վերացարկման անհրաժեշտությունը, և ոչ տնտեսական գործոնների դիտարկումը երբեմն գերակայություն է ստանում:

Այս պայմաններում ցանկացած վիճակագրական հետազոտության արժեքավորությունը բխում է հետազոտության առարկայի հստակ սահմանումից և հետազոտության հիմքում ընկած սկզբունքների հիմնավորվածությունից:

Օգտագործված գրականություն

1. Лызлов Д., Преимущества и недостатки ВВП как показателя социально-экономического развития страны, "Российский внешнеэкономический вестник", 2, 2009.
2. Центр гуманитарных технологий. Индекс развития человеческого потенциала – Информация об исследовании. URL: http://gtmarket.ru/ratings/human-development-index/human-development-index-info
3. Эколого-экономический индекс регионов РФ. Методика и показатели расчета // С.Н. Бобылев, В.С. Минаков, С.В. Соловьева, В.В. Третьяков. М., WWF России, РИА Новости, 2012.
4. Coyle D., GDP: A Brief but Affectionate History. UK: Princeton University Press. Chapter 1, 2012.
5. Kuznets S., National Income, 1929–1932, 1934. 73rd US Congress, 2d session, Senate document no. 124.
6. Dickinson E., GDP: a brief history // Foreign Policy. 2nd, January, 2011.
7. Costanza R., Hart M., Beyond GDP: The Need for New Measure of Progress. USA: Boston University Creative Services, 2009.
8. Vaury O., Is GDP a good measure of economic progress? – URL: http://www.paecon. net/PAEReview/issue20/Vaury20.htm
9. http://att-vesti.neva.ru/J37-5.HTM
10. Mishan E.J., The Cost of' Economic Growth. Staples Press, London, 1967.
11. Daly H.E., Steady-State Economics. W.H. Freeman, San Francisco, 1977.
12. Daly H.E., Allocation, distribution, and scale: towards an Economics that is efficient, just and sustainable. Ecological Economics 6, 1992.
13. Helliwell J., How's life? Combining individual and national variations to explain subjective wellbeing. Economic Modelling 20, 2003.
14. Max-Neef M., Economic growth and quality of life: A threshold hypothesis. Ecological Economics 15, 1995.
15. Van den Bergh J., The GDP paradox – Journal of Economic Psychology 30, 2009.
16. Rawls J., A Theory of Justice. Clarendon Press, Oxford, 1972.

АРАКСИЯ НАЗАРЕТЯН
Аспирант кафедры статистики АГЭУ

Системные недостатки ВВП как индикатора оценки уровня экономического развития.– В современных условиях возобновился интерес исследователей к проблемам обеспечения устойчивого, сбалансированного экономического развития систем, в том числе и на международном уровне. В мире активно идет разработка критериев и индикаторов устойчивого развития. Этим занимаются ведущие международные организации: ООН, Всемирный банк, Организация стран экономического сотрудничества и развития (ОЭСР), Европейская комиссия и т.д. В статье рассмотрены методологические проблемы построения агрегированных статистических показателей, в особенности ВВП. Выявлены недостатки ВВП как показателя оценки экономического развития. Рассмотрены альтернативные показатели оценки результатов развития общества.

Ключевые слова: *экономическое развитие, экономический рост, ВВП, устойчивое развитие, совокупный показатель.*
JEL: F40, O10, O40

ARAKSYA NAZARETYAN
Post-graduate at the Chair of Statistics at ASUE

Systemic Disadvantages of GDP as an Indicator for Measuring the Level of Economic Development.– In modern conditions the interest of researchers in the problems of sustainable, balanced economic development has activated. The criteria and indicators of sustainable development have actively developed in the world in recent years. Many leading international organizations (World Bank, UND, OECD, European Commission and etc.) are involved in the process. The article is devoted to the methodological problems of constructing aggregated indicators, especially GDP. The article reveals the main disadvantages of GDP and considers alternative indicators of economic development.

Key words: *economic development, economic growth, GDP, sustainable development, aggregate indicator.*
JEL: F40, O10, O40